ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր **09/02/2022**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 19 անդամներ:

Բացակա էին՝ Աստղիկ Բաբայանը, Մուշեղ Ներսիսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Լուսինե Մարտիրոսյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյանը

Լսեցին
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 9-ի առաջին նստաշրջանի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) <<Գլաձոր համայնքային տնտեսություն>> համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունը <<Եղեգնաձորի համայնքային տնտեսություն>> համայնքային ոչ առեվտրային կազմակերպությանը միացնելու մասին

2) Ավագանու մշտական գործող հանձնաժողովների անհատական կազմը հաստատելու մասին

3) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 09-Ա/

Լսեցին
<<ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ <<ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, 64-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի, և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով.

1. <<Գլաձոր համայնքային տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը միացնել <<Եղեգնաձորի համայնքային տնտեսություն>> ոչ առևտրային կազմակերպությանը:

2. <<Գլաձոր համայնքային տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավունքներն ու պարտականությունները փոխանցել <<Եղեգնաձորի համայնքային տնտեսություն>> ոչ առևտրային կազմակերպությանը՝ համապատասխան փոխանցման ակտ կազմելու միջոցով:

3. Ուժը կորցրած ճանաչել ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 08-Ա որոշման 11-րդ հավելվածը:

4. Ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի 08-Ա որոշման 10-րդ հավելվածը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ ըստ ներկայացված հավելվածի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10-Ա/

Լսեցին
ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով 2021 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 7-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի դրույթները.

1. Հաստատել ավագանու մշտական գործող հանձնաժողովների անհատական կազմը համաձայն 1, 2, 3, և 4 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ որոշել 2022 թվականի մարտի 10 –ին, ժամը՝ 18:00 - ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12-Ա/

Լսեցին

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի և ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման 12-րդ կետը.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հետևյալ անհատական կազմը.

- Ավագյան Վարդան - համայնքապետի տեղակալ նախագահ
- Մարտիրոսյան Լուսինե - գլխավոր մասնագետ-իրավաբան նախագահի տեղակալ
- Պողոսյան Քրիստինե - գլխավոր մասնագետ /սոց. աշխատող/ քարտուղար
- Սարգսյան Անժելա - աշխատակազմի քարտուղար անդամ
- Մկրտչյան Թամարա - բժշկուհի, ավագանու անդամ անդամ
- Սարգսյան Մանե - հոգեբան անդամ
- Գրիգորյան Նարինե - մանկավարժ անդամ
- Ստեփանյան Նաիրա - մանկավարժ բանասեր անդամ
- Սայադյան Մարիամ - սոցիալական մանկավարժ անդամ

2. Ուժը կորցրած ճանաչել ավագանու 2021 թվականի հուլիսի 12-ի թիվ 57-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13-Ա/

Ավագանու անդամներ

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

ՍՈՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԵՂԻՇԵ ՆԱՋԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐՅԱՆ

ՄԱՐԱՏ ՇԱՀԲԱՋՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ

ԾՈՎԻՆԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Անժելա Սարգսյանը _____